

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆՀԲՄԱՇՁԲ-20/2**

ք. Երևան

«05» 08 2020թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վահրամ Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տրանսունիվերսալ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արտաշես Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրը և կատարման ժամկետը յուրաքանչյուր չափաբաժնի համար սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև պայմանագրի շրջանակներում կնքվող համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներե բաժնում») նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրությունե բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում»):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **15 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված

աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 118134729 (մեկ հարյուր տասնութ միլիոն մեկ հարյուր երեսունչորս հազար յոթ հարյուր քսանինը) ՀՀ դրամ, որից 19689121 (տասնինը միլիոն վեց հարյուր ութսունինը հազար մեկ հարյուր քսանմեկ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

2-րդ չափաբաժին 63285266 (վաթսուներեք միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր վաթսունվեց) ՀՀ դրամ՝ որից 10547544 (տասը միլիոն հինգ հարյուր քառասունյոթ հազար հինգ հարյուր քառասունչորս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

4-րդ չափաբաժին 54849463 (հիսունչորս միլիոն ութ հարյուր քառասունինը հազար չորս հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ՝ որից 9141577 (ինը միլիոն մեկ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:²⁹

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանն ընդհանուր պարտավորությունների չկատարման կամ ոչ պարտավորման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա

կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:³³

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:³⁴

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում» նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ

³³ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:

³⁴ Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համապետել գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02698732

Կ Ա Պ Ա Լ Ա Ռ ՈՒ

«Տրանսունիվերսալ» ՓԲԸ
Հասցեն՝ ք. Երևան, Զավարյան 13/1
Հեռ.՝ +37410-56-27-45, +37441-10-58-02
«ԱԿԲԱ Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 22053333203000
ՀՎՀՀ 03300028

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝



Վ. Գասպարյան

(ստորագրություն)

Տնօրեն՝



Ա. Բաղդասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Չափաբաժին 2. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-2

«ԵՐԵՎԱՆԻ Հ. ԳԱԼՍՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 83 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ԴՊԱԿ-Ի ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Յ/Յ	Շիֆր, նորմատիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուրի արժեքը միավորի համար (հազար դրամ)	Ընդհանուրի արժեքը (հազար դրամ)
ԲԱԺԻՆ-1						
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1. ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E46-124 32-3	Փայտե դռների քանդում 7 հատ	100մ2	0.144	124.906	17.986
2	E46-124 32-3	Մետաղական հին դռան քանդում՝ 1 հատ	100մ2	0.08	170.327	13.626
3	E46-122	Փայտից պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ	100մ2	0.33	85.163	28.104
4	E46-124 32-3	Ստեկլոբլոկից հին պատուհանների քանդում՝ 6 հատ	100մ2	0.403	85.163	34.321
5	E9-46	Աստիճանավանդակի մետաղական բռնածողի քանդում՝ 12.0 գծմ	տ	0.085	113.551	9.652
6	E46-102	Սպորտդահլիճի փայտե հատակի քանդում	100մ2	1.32	34.065	44.966
7	E46-109	Խճանկար հատակի կացնահարում	100մ2	1.67	17.033	28.445
8	E13-263	Առաստաղների վրայից հին ներկի քերում	100մ2	4.15	17.033	70.685
9	E13-263	Պատերի վրայից հին ներկի քերում	100մ2	6.5	17.033	110.712
10	E13-263	Շեպերի վրայից հին ներկի քերում	100մ2	0.45	17.033	7.665
11	E46-103 30-3	Պատերի վրայից հին հաղձասալի քանդում	100մ2	0.06	39.743	2.385
12	C310-15	Շին աղբի հացաքում և տեղափոխում	տ	23	2.839	65.292
ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	4.15	158.971	659.731
2	E15-635	Պատերի ներկում յուղաներկով՝ h=1.60 մ	100մ2	3.25	128.362	417.177
3	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	3.25	147.616	479.753
4	E15-664	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.45	397.429	178.843

	168-7					
5	E15-664 168-7	Աստիճաններից ալյումինե բռնածողի մոնտաժում	մ	12	20.439	245.270
6	E8-142 15-Feb	Պենզաբլոկից՝ 100 մմ հաստությամբ միջնորմի կառուցում, 2.10 մ2	մ3	0.21	20.439	4.292
7	E15-250-1 1-AP15-55Y-5	Պենզաբլոկով շարած հատվածի գիպսոնիտե քահարթում	100մ2	0.042	113.551	4.769
8	շուկա	Լամինատից դարակների կառուցում պահարանում՝ 900x250x20, 8 հատ	մ2	1.8	22.710	40.878
9	E15-262	Միջանցքի պատի երեսպատում կերամիկական սալիկներով	100մ2	0.07	851.633	59.614
10	E8-194	Գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	100մ2	4.15	56.776	235.618
ՊՐԵՍԳՐԱՆԻՏԵ ՀԱՏԱԿ						
1	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	1.65	158.971	262.303
2	E11-221-1 30-7	Պրեսգրանիտե ծածկույթ	100մ2	1.65	839.290	1384.829
3	E11-252 30-7	Պրեսգրանիտե շրիշակ h=10սմ 112գ.մ.	100մ2	0.112	839.290	94.000
ՍՊՈՐՏՂԱՅԼԻՑԻ ՀԱՏԱԿ						
1	E11-6 1-Nov	Խճի նախապատրաստական շերտի լիցք, 100 մմ	մ3	13.2	7.949	104.921
2	E11-11 1-11	Բետոնե հատակի իրականացում՝ B15 դասի, 70 մմ	մ3	9.25	56.776	525.173
3	E12-289	Ռուբեռոիդ քիտումնե մածիկի վրա՝ 1 շերտ	100մ2	1.32	158.971	209.842
4	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	1.32	158.971	209.842
5	E11-63	Փայտե լազաատերի մոնտաժում՝ 100x100 մմ, ք. 700 մմ	100մ2	1.32	90.841	119.910
6	E11-63	Լազաներ 100*100 մմ.	մ3	1.95	170.327	332.137
7	E11-184	Փայտե՝ 50x70 մմ չորսուններով հատակի կառուցում	100մ2	1.32	1258.935	1661.794
8	E11-273	Փայտե շրիշակների տեղադրում՝ 60 մմ. բարձ.	գ.մ.	47	2.839	133.422
9	E15-584 5-38 5-37	Փայտե հատակի հղկում և ներկում	100մ2	1.32	34.065	44.966
10	E20-409	Օղափոխության անցքերի տեղադրում՝ մետաղե ցանց՝ Փ6 մմ. 250*250 չափի՝ անկ. 40*40 մմ	հատ	8	5.678	45.420
		Ընդամենը				7888.345
2. ԼՎԱՑԱՐԱՆՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԸ						

1	E46-99	Բետոնից հատակի քանդում	մ3	0.1	56.776	5.678
2	E16-33 6-1	Փ50 մմ պոլուպրոպիլենային խողավակ	մ	10	2.271	22.710
3	E22-365	Փ50 մմ ձևավոր մասեր	հատ	8	0.795	6.359
4	E16-262 24-2	Փ20 մմ պոլուպրոպիլենային խողավակ	մ	10	1.590	15.897
5	E22-365	Փ20 մմ ձևավոր մասեր	հատ	8	0.454	3.634
6	E11-11	Բետոնից հատակի վերականգնում B15 դասի բետոնով	մ3	0.1	56.776	5.678
7	E17-22 1-5	Լվացարանների տեղադրում	լրակազմ	3	28.388	85.163
8	E17-22 1-5	Ջրի ծորակների տեղադրում	լրակազմ	3	7.949	23.846
9	ի.տ.	Փ 20 փականի տեղադրում	հատ	4	3.974	15.897
10	ի.տ.	Փ20 մմ ճկուն միացումների տեղադրում	հատ	7	1.363	9.538
11	ի.տ.	Փ 50 սիֆոնների տեղադրում	հատ	3	2.271	6.813
		Ընդամենը				201.212

3. Դռներ Պատուհաններ

1	ի.տ.	Մետաղոպլաստ դուռ, սպիտակ, 60 մմ հաստությամբ, 4+4 մմ պրոֆիլ	մ2	23.3	26.660	621.173
2	ի.տ.	Մետաղոպլաստ պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ Բացվող մաս	մ2	20.85	22.710	473.508
3	ի.տ.	Մետաղոպլաստ պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ չբացվող	մ2	52.47	19.748	1036.178
4	ի.տ.	Պլասմասե պատուհանագոգ սպիտակ 30սմ լանությամբ	գ.մ	26.2	3.407	89.251
5	E12-280	Արտաքին 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից պատուհանագոգերի տեղադրում, 25 սմ լայնությամբ - 26.20 գծմ	մ2	6.55	5.678	37.188
		Ընդամենը				2257.298

4. ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՂԱՐՄԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

1	E46-124 32-3	Փայտե դռների քանդում 3 հատ	100մ2	0.051	124.906	6.370
2	E46-122	Փայտից պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ	100մ2	0.083	90.841	7.540
3	E46-121	Լինոլիումից հատակի քանդում	100մ2	0.617	22.710	14.012
4	E13-263	Առաստաղների վրայից հին ներկի քերում	100մ2	0.617	17.033	10.509
5	E13-263	Պատերի վրայից հին ներկի քերում	100մ2	1.18	17.033	20.099
6	E13-263	Շեպերի վրայից հին ներկի քերում	100մ2	0.055	17.033	0.937
7	E46-103 30-5	Խոհանոցի պատի վրայից հին կերամիկական սալիկների քանդում	100մ2	0.084	39.743	3.338

8	C310-15	Շին աղբի հացաքում և տեղավորում	տ	17	2.839	48.259
ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ՎԵՐԱՆՈՐԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	0.617	158.971	98.085
2	E15-635	Պատերի ներկում յուղաներկով՝ h=1.60 մ	100մ2	0.59	147.616	87.094
3	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.59	147.616	87.094
4	E15-664 168-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.055	397.429	21.859
5	E8-142 15-Feb	Պենզաբլոկից՝ 400 մմ հաստությամբ միջնորմի կառուցում, 1.60 մ2	մ3	0.65	20.439	13.285
6	E15-250-1 1-AP15-55y-5	Պենզաբլոկով շարած հատվածի գիպսոնիտ քսահարթում	100մ2	0.032	113.551	3.634
7	E15-262	Խոհանոցի պատի երեսպատում կերամիկական սալիկներով	100մ2	0.1	851.633	85.163
8	E13-263	Մետաղական դռան հին ներկի քերում մաքրում	100մ2	0.093	113.551	10.560
9	E15-613	Մետաղական դռան ներկում հակակոռոզիոն ներկով	100մ2	0.093	147.616	13.728
ՊՐԵՍԳՐԱՆԻՏԵ ՀԱՏԱԿ						
1	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	0.617	158.971	98.085
2	E11-221-1 30-7	Պրեզրանիտե ծածկույթ	100մ2	0.617	839.290	517.842
3	E11-252 30-7	Պրեզրանիտե շրիշակ h=10սմ 40գ.մ.	100մ2	0.04	839.290	33.572
		Ընդամենը				1181.065
5. Դռներ Պատուհաններ						
1	ի.տ.	Մետաղապլաստե դուռ, սպիտակ, 60 մմ հաստությամբ, 4+4 մմ պրոֆիլ	մ2	3.49	26.660	93.043
2	ի.տ.	Մետաղապլաստե պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ Բացվող մաս	մ2	3.23	22.710	73.354
3	ի.տ.	Մետաղապլաստե պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ չբացվող	մ2	5.03	19.748	99.332
4	ի.տ.	Պլասմասե պատուհանագոգ սպիտակ 30սմ լանությամբ	գ.մ	4.8	3.407	16.351

5	E12-280	Արտաքին՝ 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից պատուհանագոգերի տեղադրում, 25 սմ լայնությամբ - 4.80 գծմ 4.80 գծմ	մ2	1.2	5.678	6.813
		Ընդամենը				288.893
6. ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԶԱՐԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԶԱՐԴԱՐՄԱՆ ՔԱՆԴԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E46-124 32-3	Փայտե դռների քանդում 12 հատ	100մ2	0.216	124.906	26.980
2	E46-122	Փայտից պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ	100մ2	1.087	90.841	98.744
3	E46-103	Մանրահատակի քանդում	100մ2	2.74	34.065	93.339
4	E46-102	Լամինատից հատակի քանդում	100մ2	0.888	20.439	18.150
5	E46-109	Խճանկար հատակի կացնահարում	100մ2	2.062	17.033	35.121
6	E13-263	Առաստաղների վրայից հին ներկի քերում	100մ2	5.7	17.033	97.086
7	E13-263	Պատերի վրայից հին ներկի քերում	100մ2	9.56	17.033	162.832
8	E13-263	Շեպերի վրայից հին ներկի քերում	100մ2	0.625	17.033	10.645
9	C310-15	Շին աղբի հացաքում և տեղափոխում	տ	16.7	2.839	47.408
ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԶԱՐԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԶԱՐԴԱՐՄԱՆ ՎԵՐԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E13-263	Միջանցքների առաստաղներից հին գաջի սվաղի քանդում	100մ2	2.062	34.065	70.243
2	E15-247-1	Միջանցքների առաստաղներին գաջի սվաղի իրականացում	100մ2	2.062	204.392	421.456
3	E15-251-1 1-AP15-55Կ-5	Միջանցքների առաստաղներին գիպսոնիտի քսահարթում	100մ2	2.062	56.776	117.071
4	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	5.7	158.971	906.137
5	E15-635	Պատերի ներկում յուղաներկով՝ h=1.60 մ	100մ2	4.78	147.616	705.606
6	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	4.78	147.616	705.606
7	E15-664 168-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.625	397.429	248.393
8	E8-142 15-2	Պեմզաբլոկից՝ 200 մմ հաստությամբ միջնորմի կառուցում, 1.80 մ2	մ3	0.36	22.710	8.176
9	E15-250-1 1-AP15-55Կ-5	Պեմզաբլոկով շարած հատվածի գիպսոնիտ քսահարթում	100մ2	0.036	170.327	6.132
ՀԱՏԱԿ						
ՊՐԵՍԳՐԱՆԻՏԵ ՀԱՏԱԿ						
1	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	2.062	158.971	327.799

2	E11-221-1 30-7	Պրեսզրանիտե ծածկույթ	100մ2	2.062	839.290	1730.616
3	E11-252 30-7	Պրեսզրանիտե շրիշակ h=10սմ 70գ.մ.	100մ2	0.07	839.290	58.750
Լամինատե հատակ						
1	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ	100մ2	3.62	158.971	575.476
2	E11-191 27-5	Լամինատե հատակ	մ2	362	4.769	1726.429
3	E11-274 30-7	Պլասմասե շրիշակ h=6սմ	մ	212	0.738	156.473
		Ընդամենը				8354.668
7. Դռներ Պատուհաններ						
1	ի.տ.	Մետաղոպլաստե դուռ, սպիտակ, 60 սմ հաստությամբ, 4+4 մմ պրոֆիլ	մ2	19.69	26.660	524.931
2	ի.տ.	Մետաղոպլաստե պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ Բացվող մաս	մ2	57.14	22.710	1297.661
3	ի.տ.	Մետաղոպլաստե պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ չբացվող	մ2	72.7	20.000	1454.000
		Ընդամենը				3276.592
8. Դռան թացվածքի ուժեղացման կոնստրուկցիաներ (քանակն է՝ 11.0 հատ)						
1	E46-80	Միջնորմային պատի քանդում	մ3	3.22	9.084	29.251
2	E46156	Փ 10 ամցքերի շաղափում հատկի մեջ	100հատ	0.88	34.065	29.977
3	E46156	Փ 10 ամցքերի շաղափում առաստաղին	100հատ	0.88	34.065	29.977
4	E8-59	4xՓ10A500C ամրանի տեղադրում	տ	0.176	397.429	69.947
5	E8-59	4xՓ10A500C թարավորի ամրանի տեղադրում	տ	0.0353	397.429	14.029
6	E8-59	Փ6AC-I, ամրանի տեղադրում	տ	0.0506	408.784	20.684
7	E6-170-4	Բետոնացում Բ 15 մետոնով	մ3	2.431	85.163	207.032
8	E8-170	Միջնորմային պատի շարում 200 սմ սալով	մ2	6.6	5.678	37.472
9	E15-250-1 1-AP15-55Y-5	Շարվածքի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.132	193.037	25.481
10	E15-250-1 1-AP15-55Y-5	Շեպերի գաջե սվաղ	100մ2	0.33	397.429	131.151
11	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	3.63	2.839	10.305
		Ընդամենը				605.307

9. ԵՐՐՈՐԴ ՄԱՍՆԱՇՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՂԱՐՄԱՆ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1	E46-124 32-3	Փայտե դռների քանդում	21հատ	100մ2	0.45	124.906	56.208
2	E46-122	Փայտից պատուհանների քանդում պատուհանագոգերի հետ		100մ2	0.565	90.841	51.325
3	E7-735	Աստիճանավանդակի հին բռնածողի քանդում		100մ	0.42	17.033	7.154
4	E46-103	Մանրահատակի քանդում		100մ2	7.362	22.710	167.192
5	E46-109	Խճանկար հատակի կացնահարում		100մ2	4.723	17.033	80.445
6	E13-263	Առաստաղների վրայից հին ներկի քերում		100մ2	13	17.033	221.424
7	E13-263	Պատերի վրայից հին ներկի քերում		100մ2	17	17.033	289.555
8	E13-263	Շեպերի վրայից հին ներկի քերում		100մ2	0.62	17.033	10.560
9	17-141	Թուջե մարդկոցների ապամոնտ.՝ 10 սեկ. (սուլոր մասնաշենքերում)		հատ	70	1.136	79.486
10	C310- 15	Շին աղբի հացաքում և տեղափոխում		տ	27.9	2.839	79.202

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆԱՇՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐՂԱՐՄԱՆ ՎԵՐԱՆՈՐԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով 1		100մ2	13	158.971	2066.628
2	E15-635	Պատերի ներկում յուղաներկով՝ h=1.50 մ		100մ2	8.5	147.616	1254.739
3	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով		100մ2	8.5	147.616	1254.739
4	E15- 6641 68-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով		100մ2	0.62	158.971	98.562
5	E7-735	Այլումինե բռնածողի տեղադրում աստիճանների		100մ	0.42	1987.143	834.600
6	17-141	Առկա թուջե մարդկոցների մոնտ.՝ 10 սեկ. (սուլոր մասնաշենքերում)		հատ	70	2.271	158.971

ՀԱՏԱԿ

ՊՐԵՍԳՐԱՆԻՏԵ ՀԱՏԱԿ

1	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ		100մ2	4.723	158.971	750.822
2	E11- 221-1 30-7	Պրեսգրանիտե ծածկույթ		100մ2	4.723	839.290	3963.967
3	E11-252 30-7	Պրեսգրանիտե շրիշակ h=10սմ 70գ.մ.		100մ2	0.245	839.290	205.626

Լամինատե հատակ

1	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտե հարթեցնող շերտի իրականացում 30մմ հաստությամբ		100մ2	7.36	147.616	1086.456
2	E11-191 27-5	Լամինատե հատակ		մ2	736	4.769	3510.089

3	E11-274 30-7	Պլասմասե շրիշակ h=6սմ	մ	445	0.738	328.446
		Ընդամենը				16556.196
10. Դռներ Պատուհաններ						
1	ի.տ.	Մետաղոպլաստե դուռ, սպիտակ, 60 մմ հաստությամբ, 4+4 մմ պրոֆիլ	մ2	45.48	28.635	1302.302
2	ի.տ.	Մետաղոպլաստե պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ Բացվող մաս	մ2	22.5	24.794	557.856
3	ի.տ.	Մետաղոպլաստե պատուհան, սպիտակ գույնի, ապակեփաթեթով 4+4 մմ պրոֆիլ չբացվող	մ2	35.07	19.748	692.562
4	ի.տ.	Պլասմասե պատուհանազոզ սպիտակ 30սմ լանությամբ	գ.մ	36	3.407	122.635
5	E12-280	Արտաքին՝ 0.55 մմ հաստությամբ ցինկապատ թիթեղից պատուհանագոգերի տեղադրում, 20 սմ լայնությամբ - 36.0 գծմ	մ2	7.2	5.678	40.878
		Ընդամենը				2716.234
11. Դռան թափվածքի ուժեղացման կոնստրուկցիաներ (քանակն է՝ 6 հատ)						
1	E46-80	Միջնորմային պատի քանդում՝	մ3	0.9	7.949	7.154
2	E46156	Փ 10 ամցքերի շաղափում հատկի մեջ	100հատ	0.48	34.065	16.351
3	E46156	Փ 10 ամցքերի շաղափում առաստաղին	100հատ	0.48	34.065	16.351
4	E8-59	4xՓ10A500C ամրանի տեղադրում	տ	0.096	397.429	38.153
5	E8-59	4xՓ10A500C թարավորի ամրանի տեղադրում	տ	0.0193	397.429	7.670
6	E8-59	Փ6AC-I, ամրանի տեղադրում	տ	0.0276	408.784	11.282
7	E6-170- 4	Բետոնացում Բ 15 լետոնով	մ3	1.326	85.163	112.926
8	E8-170	Միջնորմային պատի շարում 100 մմ սալով	մ2	3.6	5.678	20.439
9	E15- 250-1 1-AP15- 55Y-5	Շարվածքի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.072	193.037	13.899
10	E15- 250-1 1-AP15- 55Y-5	Շեպերի գաջե սվաղ	100մ2	0.18	397.429	71.537
11	C310- 13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.99	2.839	2.810
		Ընդամենը				318.574
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-1				43644.385
ԲԱԺԻՆ-2						
1. Էլեկտրալուսավորություն և էլեկտրաուժային մաս						
1	Ա8-148- 1	Մալուխ պղնձե BBF 4x10մմ	100մ	5.2	338.609	1760.767
2	Ա8-148- 1	Մալուխ պղնձե BBF 3x2.5մմ	100մ	3.3	64.497	212.840

3	ԱՑ-402-2	Հաղորդակար պղնձե ՈՅ-3 1x1,5մ2 կարմիր	100մ	36.9	32.248	1189.969
4	ԱՑ-402-2	Հաղորդակար ՈՅ-3 1x1,5 մմ2 կապույտ	100մ	36.9	32.248	1189.969
5	ԱՑ-402-2	Հաղորդակար ՈՅ-4 1x4 մմ2 դեղին	100մ	3.4	32.248	109.645
6	ԱՑ-521-1	Ավտոմատ անջատիչների արկղ պլաստմասսե փականով, պատի մեջ տեղադրվող՝ (300x200x150մմ) 8 մոդուլ (IP40)	հատ	7	16.449	115.144
7	ԱՑ-525-2	ավտոմատ անջատիչ եռաբևեռ -50A, C տիպի	հատ	7	9.675	67.722
8	ԱՑ-525-2	Ավտոմատ անջատիչ (միաբևեռ) 25 Ա	հատ	40	2.741	109.645
9	ԱՑ-591-7	Էլ. վարդակ երկբևեռ, պատի մեջ տեղադրվող հողանցման հպակով	100հատ	0.71	322.485	228.964
10	ԱՑ-591-10	Անջատիչ երկու սեղմակով, պատի մեջ տեղադրվող	100հատ	0.25	306.361	76.590
11	ԱՑ-591-10	Անջատիչ մեկ սեղմակով, պատի մեջ տեղադրվող	100հատ	0.3	257.988	77.396
11	ի.տ.	Մոնտաժային տուփ (մեկ տեղանոց) 70x70x43 մմ	հատ	115	0.161	18.543
12	ի.տ.	Ամրակներ 9 մմ2	տուփ	28	0.806	22.574
13	ԱՑ-604-1	Լուսատու 16Վտ DBO 12-11-111.25	100հատ	2.19	809.668	1773.173
14	ԱՑ-604-1	Լուսարձակ LED 15վատ	100հատ	0.06	2418.636	145.118
15	E46-57	Ակոսի փորում	100մ	36.9	32.248	1189.969
16	E15-246-1	Ակոսի սվաղում	100մ2	1.845	241.864	446.238
17	ԱՑ-603-1	Հին լուսատուների ապամոնտաժում	100հատ	1.8	120.932	217.677
18	ԱՑ-417-1	Վինիպլաստե խողովակ Փ 15	100մ	2.5	48.365	120.912
19	ի.տ.	Տուփեր անջատիչների և վարդակների համար.	հատ	126	0.163	20.480
		Ընդամենը				9093.335
		Ընդամենը՝ ԲԱԺԻՆ-2				9093.335
		Ընդամենը				52737.722
		ԱԱՀ	20.00%			10547.544
		Ընդամենը				63285.266

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Երևան, Օրբելի 63 հասցեում:

Չափաբաժին 4. Կրթական օբյեկտների հիմնանորոգում-4

«ԱՐՄԱՎԻՐԻ Ռ. ԵՂՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՏԱՆԻՔԻ (ԱՅՐ ԹՎՈՒՄ ԻՆժԵՆԵՐԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻԿԱՑԻԱՆԵՐԻ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԷԼԵՄԵՆՏՆԵՐԻ) ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՆՈՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Շիֆր, նորմատիվի համարը	Աշխատանքների, ծախսերի անվանումը և չափման միավորը	Չափման միավորը	Քանակը	Ընդհանուր ի արժեքը միավորի համար (հազար դրամ)	Ընդհանուրի արժեքը (հազար դրամ)
ԲԱԺԻՆ-1						
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1. IV ՍԱՄՆԱՇԵՆՔ, ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
Հատակներ						
1	E46-103	Մանրահատակի քանդում	100մ2	2.875	27.313	78.523
2	E46-109	Մետլախե հատակների քանդում	100մ2	0.206	32.775	6.752
3	E46-109	Խճանկար հատակների քերթատում	100մ2	2.454	16.388	40.215
4	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտ. ավազի հարթաշերտի կառուցում	100մ2	5.531	152.950	845.966
5	E11-135 30-6	Մետլախե հատակների կառուցում	100մ2	0.206	900.000	185.400
6	E11-191 27-5	Լամինատե հատակի կառուցում 8 մմ հաստ.	մ2	287.10	4.589	1317.358
7	E11-221-1 30-7	Կերամոգրանիտե հատակի կառուցում /փայտի ֆակտուրայով/	100մ2	2.434	900.000	2190.600
8	E11-221-1 30-7	Աստիճանների երեսապատում կերամոգրանիտով /սպիտակ մարմարագույն/	100մ2	0.139	900.000	125.100
9	E11-221-1 30-7	Հարթակի երեսապատում կերամոգրանիտով /սպիտակ մարմարագույն/	100մ2	0.045	900.000	40.500
10	E11-221-1 30-7	Պլաստմասսե 9 սմ. բարձր, շրիշակների տեղադրում	մ	232.80	1.202	279.767
11	E7-738	Աստիճանների առկա ճաղաշարի ապամոնտաժում	գ.մ.	9.300	0.546	5.080
12	E7-738	Այլումինե ճաղաշարի մոնտաժում	գ.մ.	9.300	19.665	182.885
13	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	3.40	2.731	9.286
Պատեր						
1	E13-263	Պատերի մաքրում սոսնձաներկից	100մ2	5.402	16.388	88.525
2	E13-263	Պատերի մաքրում յուղաներկից	100մ2	2.325	16.388	38.101
3	E15-250-1 1-AP15- 55Կ-5	Պատերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	7.727	240.350	1857.184
4	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	4.626	142.025	657.008
5	E15-635	Պատերի ներկում յուղաներկով`	100մ2	3.091	142.025	438.999
6	E15-250-1 1-AP15- 55Կ-5	Շեպերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	0.416	382.375	159.068
7	E15-664 168-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.416	152.950	63.627

8	E46-37	Պատերից գաջե սվաղի քանդում՝ սան. հանգ.	100մ2	0.387	21.850	8.456
9	E15-262	Պատերի սվաղում ցեմ. ավազի շաղախով	100մ2	0.798	163.875	130.772
10	E15-90	Պատերի երեսապատում հաղճասալով /լրացում/	մ2	79.80	8.194	653.861
11	E10-289 58-2	Լամինատե ջրակայուն միջնորմների կառուցում դռների հետ միասին	մ2	14.80	17.250	255.300
12	շուկա	Բռնակ փականներ	կոմպ	4.00	6.900	27.600

Առաստաղներ

1	E13-263	Առաստաղների մաքրում սոսնձաներկից	100մ2	5.531	23.000	127.213
2	E15-251-1 1-AP15- 55y-5	Առաստաղների քսահարթում գիպսոնիտով	100մ2	5.325	287.500	1530.938
3	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	5.325	161.000	857.325
4	E34-389 k0.5 66-1	Կախովի առաստաղ՝ գունավոր պլաստիկից	մ2	20.60	4.025	82.915
		Ընդամենը				12284.326

2. IV ՄԱՍՆԱՇԵՆՔ, ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հատակներ

1	E46-103	Մանրահատակի քանդում	100մ2	5.145	28.750	147.919
2	E46-109	Մետլախե հատակների քանդում	100մ2	0.205	28.750	5.894
3	E11-55 E11-56 40 8-1	Ցեմենտ. ավազի հարթաշերտի կառուցում	100մ2	5.351	161.000	861.511
4	E11-135 30-6	Մետլախե հատակների կառուցում	100մ2	0.206	900.000	185.400
5	E11-191 27-5	Լամինատե հատակի կառուցում 8 մմ հաստ.	մ2	287.10	5.175	1485.743
6	E11-221-1 30-7	Կերամոգրանիտե հատակի կառուցում /փայտի ֆակտուրայով/	100մ2	2.274	900.000	2046.600
7	E11-221-1 30-7	Պլաստմասսե 9 սմ. բարձր. շրիշակների տեղադրում	մ	232.80	1.265	294.492
8	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	2.80	2.875	8.050

Պատեր

1	E13-263	Պատերի մաքրում սոսնձաներկից	100մ2	5.402	11.500	62.123
2	E13-263	Պատերի մաքրում յուղաներկից	100մ2	2.325	11.500	26.738
3	E15-250-1 1-AP15- 55y-5	Պատերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	7.727	253.000	1954.931
4	E15-664 168-7	Պատերի ներկում լատեքսային ներկով	100մ2	4.626	149.500	691.587
5	E15-635	Պատերի ներկում յուղաներկով	100մ2	3.091	149.500	462.105
6	E15-250-1 1-AP15- 55y-5	Շեպերի քսահարթում գիպսոնիտով	100մ2	0.416	402.500	167.440
7	E15-664 168-7	Շեպերի ներկում լատեքսային ներկով	100մ2	0.416	161.000	66.976
8	E46-37	Պատերից գաջե սվաղի քանդում՝ սան. հանգ.	100մ2	0.382	23.000	8.786
9	E15-262	Պատերի սվաղում ցեմ. ավազի շաղախով	100մ2	0.798	172.500	137.655
10	E15-90	Պատերի երեսապատում հաղճասալով /լրացում/	մ2	79.80	8.625	688.275

11	E10-289 58-2	Լամինատե ջրակայուն միջնորմների կառուցում դռների հետ միասին	մ2	14.80	17.250	255.300
12	շուկա	Բռնակ փականներ	կումպ	4.00	6.900	27.600
Առաստաղներ						
1	E13-263	Առաստաղների մաքրում սոսնձաներկից	100մ2	5.531	23.000	127.213
2	E15-251-1 1-AP15- 55y-5	Առաստաղների քսահարթում զիպսոնիտով	100մ2	5.325	287.500	1530.938
3	E15-665 168-8	Առաստաղների ներկում լատեկսային ներկով	100մ2	5.325	161.000	857.325
4	E34-389 k0.5 66-1	Կախովի առաստաղ՝ գունավոր պլաստիկից	մ2	20.60	4.025	82.915
		Ընդամենը				12183.514
3. IV ՄԱՍՆԱՇԵՆՔ I ՀԱՐԿ						
ԴՈՒՌ՝ Դ-1-ի ՓՈՒԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ						
1	E46-124 32-3	Փայտե՝ 0.90*2.10 մ. չափի դռան ապամոնտաժում	100մ2	0.132	144.210	19.036
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.90*2.10 մ. չափի դռան մոնտաժում՝	մ2	13.23	33.000	436.590
3	E15-246-1	Դռան շեյերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.0973	458.850	44.646
4	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	1.40	3.278	4.589
ԴՈՒՌ՝ Դ-2-ի ՓՈՒԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐ						
1	E46-124 32-3	Փայտե՝ 0.70*2.10 մ. չափի դռան ապամոնտաժում	100մ2	0.0588	144.210	8.480
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 0.70*2.10 մ. չափի դռան մոնտաժում՝	մ2	5.88	33.000	194.040
3	E15-246-1	Դռան շեյերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.012	458.850	5.506
4	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.60	3.278	1.967
ԴՈՒՌ՝ Դ-3-ի ՓՈՒԱՐԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E46-124 32-3	Մետաղապլաստե՝ 1.20*2.70 մ. չափի դռան ապամոնտաժում	100մ2	0.032	144.210	4.615
2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 1.20*2.70 մ. չափի դռան մոնտաժում՝	մ2	3.24	33.000	106.920
3	E15-246-1	Դռան շեյերի գաջե սվաղի իրականացում	100մ2	0.0160	458.850	7.342
4	C310-13	Շին աղբի հավաքում և տեղափոխում	տ	0.30	3.278	0.983
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈԳԵՐԻ ԹԻԹԵՂԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ /IV մասնաշենք/						
1	E15-262 1-AP15- 55y-5	Պատուհանի արտաքին շեյերի սվաղում ցեմ. ավազի շաղախով	100մ2	0.0726	458.850	33.313
2	E12-280 8-5	Պատուհանների գոգերին գոգնոցների տեղադրում՝ 0.55 մմ ց. թ.	մ2	10.71	6.555	70.204
ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈԳԵՐԻ ԹԻԹԵՂԱՊԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ /անցումային սրահ/						
1	E15-262 1-AP15- 55y-5	Պատուհանի արտաքին շեյերի սվաղում ցեմ. ավազի շաղախով	100մ2	0.1040	458.850	47.720
2	E12-280 8-5	Պատուհանների գոգերին գոգնոցների տեղադրում՝ 0.55 մմ ց. թ.	մ2	5.40	6.555	35.397
IV ՄԱՍՆԱՇԵՆՔ II ՀԱՐԿ						
Պ-1 ՄԱԿՆԻՇԻ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						
1	E46-122	Ապակեբրկոկից՝ 2.60*1.85 մ. շարվածքի ապամոնտաժում	100մ2	0.0481	131.100	6.306

2	ի.տ.	Սպիտակ մետաղապլաստե՝ 1.20*1.85 մ. չափի պատուհանի մոնտաժում՝ բացվող մաս	մ2	1.56	27.531	42.948
